

**ԱՐՎԵՍՏ ՀԱՅԱՍՏԱՆ հիմնադրամի ԱՐՎԵՍՏԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ
Ֆինանսական օգնություն
Կանոնակարգ- պայմաններ
(2016 նոյեմբեր- 2017 դեկտեմբեր)**

**Բաժին Ա
Ընդհանուր դրույթներ**

1. ԱՐՎԵՍՏ ՀԱՅԱՍՏԱՆ հիմնադրամը (ԱՅ հիմնադրամ) ֆինանսական օգնություն է ցուցաբերում ժամանակակից արվեստի ոլորտում աշխատող արվեստագետներին՝ ի նպաստ Հայաստանում ժամանակակից արվեստի ոլորտի զարգացման:
2. Արվեստի նախագծերի ստեղծման համար որպես ֆինանսական օգնություն տրամադրվող դրամական միջոցները (այսուհետ նաև՝ Ֆինանսական օգնություն) հասցեագրված են արվեստագետներին եւ արվեստային խմբերին, ովքեր ժամանակակից արվեստի ոլորտում աշխատում են տարբեր միջոցներով՝ ներառյալ մեդիա, թվանշային, լուսանկարչություն, աուդիո-վիզուալ, պերֆորմանս եւ հանրային արվեստներ: Ծրագրի հրավերը բաց է ինչպես արվեստի բուհերի շրջանավարտների, այնպես էլ պրոֆեսիոնալ արվեստագետների համար:
3. Ֆինանսական օգնությունը տրամադրվում է հետազոտական աշխատանքի եւ արվեստի գործի ստեղծման ընթացքում առաջացած ծախսերի համար: Ընդ որում, նախագծերի հետազոտական փուլը կարող է ավարտված լինել մինչ մրցույթին դիմելը, իսկ արվեստի գործի ստեղծումը սույն ծրագրով Ֆինանսական օգնություն ստացած նախագծի ավարտից առաջ պարտադիր պայման է:

**Բաժին Բ
Ֆինանսական օգնության նպատակները**

4. Ծրագրի նպատակները.
 - աջակցել արվեստի նոր գործերի ստեղծմանը,
 - ոգեւորել արվեստագետներին՝ հետամուտ լինելու իրենց արվեստային գործունեությանն ու մասնագիտական զարգացմանը,
 - նպաստել Հայաստանի ժամանակակից արվեստի դաշտի աշխուժացմանը:

**Բաժին Գ
Մասնակցությունը**

5. Ծրագրին կարող են դիմել անհատ արվեստագետներ եւ արվեստի խմբեր (համատեղ աշխատող երկու եւ ավելի արվեստագետներ):

6. Ծրագրին կարելի է դիմել երկու առանձին հնարավորությամբ՝ ըստ տարիքի.

- 18-ից մինչեւ 25 տարեկան արվեստագետներ,

- 26-ից բարձր տարիք ունեցող արվեստագետներ:

7. Մասնակցության պայմանները.

- լինել հայաստանաբնակ կամ ներկայացնել հայկական սփյուռքը,
- ստեղծել արվեստի գործը Հայաստանում,
- չհանդիսանալ Ծրագրի շահառու/ներ նույն օրացույցային տարում,
- նախկինում ԱՀ հիմնադրամի շահառու/ներ հանդիսանալու դեպքում տրամադրած լինել ծրագրի պայմանները բավարարող հաշվետուություն:

8. Դիմումները կհամարվեն ոչ ամբողջական հետեւյալ դեպքերում.

- հայտադիմումը լրացված է սխալներով կամ կիսատ,
- նախագիծը կամ ակտիվությունները չունեն հստակ ձեւակերպված արվեստային բաղադրիչ,
- ներկայացվող նախագիծն ավարտված է:

Բաժին Դ

Ֆինանսական օգնության չափն ու տրամադրման կարգը

9. Առաջարկվող ֆինանսական օգնությունը կազմում է միջինը 4.500 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Տրամադրվող դրամական միջոցները հաշվարկվում են ըստ փոխանցման օրը նշված դրամական միջոցների՝ ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած փոխարժեքների:

Այնուհանդերձ, տրամադրվող գումարը կարող է լինել ավելի բարձր կամ ցածր՝ ըստ արվեստագետի ակնկալած գումարի, որը կախված է նախագծի պահանջներից:

10. Դիմորդը կարող է ստանալ պահանջվող գումարը ոչ ամբողջությամբ: ԱՀ Հիմնադրամն իրեն իրավունք է վերապահում որոշելու տրամադրվող ֆինանսական օգնության վերջնական չափը:

11. Ֆինանսական միջոցները տրվում են ի նպաստ հետազոտական աշխատանքի կատարման եւ արվեստի գործի ստեղծման:

12. Արվեստի նախագծով հետազոտական աշխատանքի ֆինանսավորմանը դիմելիս՝ անհրաժեշտ է ներկայացնել, թե ինչով այդ աշխատանքը կնպաստի ստեղծվող արվեստի գործի, ինչպես նաեւ արվեստագետի արվեստային գործունեության զարգացմանը:

13. Հայտադիմումը կարող է ներառել կամ չներառել հետազոտական աշխատանքի բաղադրիչ, մինչդեռ պարտադիր նախապայման է արվեստի գործի ստեղծումը:

14. Առաջնահերթություն կտրվի այն նախագծերին, որոնք ներառված են Հայաստանում եւ արտերկրում հստակ ժամկետներում կայանալիք արվեստի հանրային ցուցադրություններում: Համաֆինանսավորումը ողջունելի է:

15. Ֆինանսական օգնության շրջանակներում ընդունելի ծախսերն են.

- կեցության ապահովման ուղղված ծախսեր, առավելագույնը ամսական 700 դոլարին համարժեք դրամի չափով,
- հետազոտական աշխատանքի ծախսեր, ներառյալ`

o արվեստի կացարանի (art residence) եւ կից ծախսեր,

o առանձին կարողությունների զարգացմանն (ոչ ակադեմիական) ուղղված ծախսեր

o համագործակցություն այլ արվեստագետների, համադրողների, տեսաբանների հետ (ներառյալ` գործընկերոջ հոնորար, ճանապարհածախ եւ կեցության ծախսեր (անհրաժեշտության դեպքում),

o մենթորություն (ներառյալ` մենթորի հոնորար, ճանապարհածախս եւ կեցության ծախսեր (անհրաժեշտության դեպքում)),

- արտադրական ծախսեր` նյութեր, սարքավորումներ (ներ.` վարձակալում), տեխնիկական ծառայություններ, արվեստանոցի վարձակալում,

- արտադրական ծախսեր` ուղղված Հայաստանում եւ արտերկրում արվեստի հանրային ցուցադրություններում ներառված արվեստի գործի ներկայացմանը:

16. Ֆինանսական օգնության շրջանակներում անընդունելի ծախսերն են.

- աշխատանքներ կամ ծախսեր, որոնք կատարվել են մինչ ֆինանսական օգնություն տրամադրելու հաստատումը եւ ֆինանսական օգնության տրամադրման պայմանագրի կնքումը,

- ուսանողական կամ կրթական ծրագրերի մասնակցություն,

- արվեստի ակադեմիական ուսուցում, ներառյալ` բակալավրիատ եւ մագիստրատուրա,

- արվեստանոցի կամ բիզնեսի կազմակերպում,

- ադմինիստրատիվ կամ այլ կազմակերպչական ծախսեր եւ ներդրումներ, որոնք անմիջական կապ չունեն նախագծի հետ,

- դրամահավաքի, մրցանակների, մրցույթների, բարեգործական միջոցառումների կազմակերպում,

- հրատարակություններ (կատալոգներ եւ մենագրություններ),

- խոշոր ծախսեր (փոխադրամիջոցի կամ անշարժ գույքի ձեռքբերում, այլ),

- գործողություններ, որոնք գործնական օգուտ չեն բերում նախագծին եւ կրում են առավելապես զբոսաշրջային բնույթ (ճամփորդություն, այցելություն թանգարաններ, այլ):

Բաժին Ե
Դիմումների ընթացքը եւ գնահատումը

17. Գնահատման ընթացքը Հիմնադրամի Խորհրդի անդամները հավասարապես գնահատում են ԱՀ Հիմնադրամի ֆինանսավորմանը ներկայացված բոլոր հայտադիմումները:
18. Առաջին փուլում Հիմնադրամի աշխատակազմն ուսումնասիրում է հայտադիմումները, կից փաստաթղթերը եւ հաստատում դրանց վավերականությունը:
19. Հայտադիմումներում եւ կից փաստաթղթերում առաջացած խնդիրների դեպքում Հիմնադրամն առաջարկում եւ ուղղորդում է դիմորդին՝ շտկելու դրանք մինչեւ Ծրագրին դիմելու վերջնաժամկետի ավարտը:
20. Երկրորդ փուլում Հիմնադրամի Խորհրդի անդամները ստանում են բոլոր վավերական հայտադիմումները, դրանց կից փաստաթղթերը, այլ հնարավոր փաստաթղթեր: Խորհրդի անդամները քննարկում են դիմումները ֆիզիկական եւ առցանց հանդիպումների ընթացքում՝ ընտրելով հաջողակ հայտադիմումներն ըստ Գնահատման չափանիշների (տես ստորեւ) եւ ֆինանսավորման հնարավորությունների: Հընթացս Հիմնադրամի Խորհրդի անդամները կարող են պահանջել հավելյալ տեղեկություններ:
21. Հիմնադրամի ղեկավարությունն ընտրում է ֆինանսավորվող հայտադիմումները հաշվի առնելով Հիմնադրամի Խորհրդի անդամների դրական եզրակացությունները:
22. Բոլոր դիմորդները տեղեկանում են արդյունքների մասին՝ համաձայն սույն կանոնակարգի 24-րդ կետով նախատեսված գրաֆիկի:
23. Գնահատման չափանիշները.
 - նախագծի արվեստային արժանիքներ,
 - դիմորդ/ների նախորդ աշխատանքների արվեստային արժանիքներ,
 - նախագծի նշանակությունը դիմորդ/ների մասնագիտական եւ գործնական առաջընթացում,
 - հնարավոր նպաստ եւ ներդրում Հայաստանի ժամանակակից արվեստի զարգացմանը,
 - ներգրավված անձանց գիտելիքներ եւ մասնագիտական կարողություններ, նրանց առնչությունը նախագծին,
 - ներգրավված գործընկերների դերը, նրանց մասնակցության հաստատումը,
 - իրագործելի ծրագրավորում, ռեսուրսների օգտագործում եւ գնահատում:
24. Հայտադիմումների գրաֆիկը եւ ընթացքը.

Բաց մրցույթ #1. Նոյեմբերի 7, 2016
Վերջնաժամկետը՝ փետրվարի 22, 2017
Ընտրությունը եւ հաղթող հայտադիմումների հայտարարումը՝ ապրիլ 2017
Բաց մրցույթ #2. հուլիսի 3, 2017

Վերջնաժամկետը՝ սեպտեմբերի 30, 2017

Ընտրությունը եւ հաղթող հայտադիմումների հայտարարումը՝
նոյեմբեր 2017

Բաց մրցույթ #3. հունվարի 10, 2018

Վերջնաժամկետը՝ մարտի 12, 2018

Ընտրությունը եւ հաղթող հայտադիմումների հայտարարումը՝
ապրիլ 2018

25. Լրացված հայտադիմումները (հայերենով կամ անգլերենով)
ուղարկվում են վերը նշված էլեկտրոնային հասցեին:

26. Դիմորդ/ները պետք է հոգ տանեն՝ հայտադիմումում հստակ
համապատասխանություն ցուցաբերելու մրցույթի չափանիշներին:

27. Մրցույթին դիմելիս կարելի է լրացնել միայն մեկ հայտադիմում:
Դիմորդ/ները կարող են մասնակցել մրցույթին յուրաքանչյուր անգամ,
սակայն նույն օրացույցային տարում կարող են ստանալ միայն մեկ
ֆինանսական օգնություն: **Դիմորդ/ները չեն կարող դիմել նույն
նախագծով երկրորդ անգամ:**

Բաժին 2

Ֆինանսական օգնության ծրագրերի վավերականություն ժամկետները եւ վճարման կարգը

28. Ֆինանսական օգնության ծրագրերը վավերական են 6 ամսվա
կտրվածքով, ինչի վերաբերյալ նշված է հայտադիմումում (դիմորդ/ները
սահմանում են նախագծի մեկնարկն ու ավարտը): Արվեստի գործի
ստեղծումը պետք է ավարտվի նշված ժամկետում:

29. ԱՅ Հիմնադրամի ֆինանսական օգնության ծրագրի շրջանակներում
ստեղծված արվեստի գործը ներկայացնելիս՝ արվեստագետները պետք
է ներառեն հիմնադրամի անունը եւ լոգոն բոլոր հետագա
հրատարակություններում, ցուցադրություններում եւ
միջոցառումներում:

30. Ստեղծված արվեստի գործերը հանդիսանում են արվեստագետի
սեփականությունը:

31. Ֆինանսական օգնության ծրագրերի գործողության ժամկետներից
առաջ կամ հետո Հիմնադրամը չի պարտավորվում փոխհատուցելու
արվեստագետին պատկանող արվեստի գործերի պահպանման,
ապահովագրման կամ տեղափոխման ծախսերը:

32. Ֆինանսական օգնությունը տրամադրվում եւ բաշխվում է հետևյալ
կերպ.

- 45 %-ը՝ պայմանագրի ստորագրումից հետո,

- 40% -ը՝ նախագծի իրականացման միջնամասում,

- 15% -ը՝ հիմնական եւ ֆինանսական հաշվետվությունների հաստատումից
հետո, որոնք պետք է փաստեն, որ ֆինանսական օգնության
շրջանակներում տրամադրված դրամական միջոցները ծախսվել են
նախատրամադրված բյուջեին համապատասխան:

Սույն կետով սահմանված Ֆինանսական օգնության՝ 1-ին և 2-րդ փուլերով տրամադրվող գումարների բաշխման տոկոսային հարաբերակցությունը կարող է փոփոխվել Հիմնադրամի կողմից: Սակայն Ֆինանսական օգնության՝ վերջին փուլով տրամադրվող գումարը չի կարող պակաս լինել 15%-ից:

Ավելին իմանալու համար խնդրում ենք ներբեռնել մեր [Տեսողական ուղեգույշը](#):